

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԴԵՍԻԱ
ԿԵՆՊԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՂՐՈՒԿՈԼՈԳԻԿԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԻԱ ՌԵՎԻԿԻ

ԱՐԹԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՏԱԿԵՐՆԵՐԸ (INSECTIVORA)

Գ.00.08 –«Կենդանաբանություն. մակարուծաբանություն.
էկոլոգիա» մասնագիտությանը
կենսաբանական գիտությունների թեկնածուի
գիտական ասուհճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАУЧНЫЙ ЦЕНТР ЗООЛОГИИ И ГИДРОЭКОЛОГИИ

ГРИГОРЯН МАРИЯ РЕВИКОВНА
НАСЕКОМОЯДНЫЕ (INSECTIVORA) РЕСПУБЛИКИ АРЦАХ

Ա Վ Տ Օ Ր Ե Փ Ե Ր Ա Տ

диссертации на соискание ученой степени
кандидата биологических наук по специальности
03.00.08 – “Зоология. Паразитология. Экология”

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և
հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնում

Գիտական ղեկավար՝
Կենս. գիտ. դոկտոր

Վ. Տ. Հայրապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
Կենս. գիտ. դոկտոր
Կենս. գիտ. թեկնածու
Առաջատար կազմակերպություն՝

Վ. Ս. Հովհաննիսյան
Ս. Ս. Բալոյան
Հայաստանի ազգային ագրարային
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. հունիսի 10-ին, ժամը 14.00-ին
ՀՀ ԲՈՂ-ի Կենդանաբանության 036 մասնագիտական խորհրդում:
Հասցե՝ 0014, ք. Երևան, Պ. Սևակի փ. 7, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և
հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն, Է-փոստ: zoohec@sci.am

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և
հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գրադարանում, իսկ սեղմագրին՝ նաև
www.sczhe.sci.am կայքում:

Ատենախոսության սեղմագրին առարված է 2017թ. հունիսի 9-ին
036 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

Կենսաբանական գիտությունների թեկնածու՝

Վ. Տ. Հայրապետյան

Тема диссертации утверждена в
Научном центре зоологии и гидроэкологии НАН РА

Научный руководитель:

доктор биол. наук

В. Т. Айрапетян

Официальные оппоненты:

доктор биол. наук

В. С. Оганесян

кандидат биол. наук

С. С. Балоян

Ведущая организация:

Национальный аграрный университет
Армении

Зашита диссертации состоится 10 июля 2017 г., в 14.00 часов, на заседании
специализированного совета 036 По зоологии ВАК РА.

Адрес: 0014, г. Ереван, ул. П. Севака 7, Научный центр зоологии и
гидроэкологии НАН РА, E-mail: zoohec@sci.am

С диссертацией можно ознакомиться в библиотеке Научного центра зоологии
и гидроэкологии НАН РА, а с авторефератом - также на сайте
www.sczhe.sci.am

Автореферат диссертации разослан 9 июня 2017 г.

Ученый секретарь специализированного совета 036,
кандидат биологических наук

Ա. Գ. Խաչատրյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը: Մարդասին ազդեցության հետևանքով էապես փոփոխում են ոչ միայն լանդշաֆտների տեսքը և բնական համակարգերը, այլև պոպուլյացիաների կառուցվածքը և կենսաբանական համակեցությունները, ընդգրկելով էվույուցիոն մեխանիզմների գործառությների գործընթացում ձևավորված կայուն կենսահամակարգերը (Գաշեv C.H., 1998; 2000; Բերդյոցին Կ.Ի., 2000; Բոլյաշակով Վ.Ի. և այլն, 2000; Ներօնով Վ.Մ. և այլն, 2001):

Արցախում ստեղծված իրավիճակը, ինչպես նաև բնակչության սոցիալական վատ պայմաններն առաջ են բերում բնական միջավայրի պահպանության կարևորագույն հիմնախնդիրը որի լուծնան հիմնական ճանապարհին ի սկզբանե կենսաբազմազանության պահպանությունն ու ռացիոնալ օգտագործումն է, որտեղ առանձնահատող տեղ են զբաղեցնում մանր կաթնասունները, մասնաւորապես միջատակերները (*Insectivora*):

Հարավային Կովկասի, այդ թվում նաև Արցախի միջատակերների կարգի կենսաբանությանը նվիրված որոշ հարցեր ներկայացվում են տարածաշրջանի կարնասունների ուսումնասիրությունների մեջ (Դայրապետյան Վ.Տ., 2014; Յավլույան Է.Գ., Յայրապետյան Վ.Տ., 2003ա; 2003բ; Դինոսկ Հ.Յ., 1914; Սատունին Կ.Ա., 1915; 1920; Դալյ Ս.Կ., 1954; Վերեացին Հ.Կ., 1959; Սոկոլով Բ.Ե., Տեմետով Ա.Կ., 1989): Սակայն նշված աշխատությունները մեծ մասամբ հիմնված են կամ կարճաժամկետ ուսումնասիրությունների, կամ սակավարիկ կետերից ստացված նյութերի հիմնան վրա, ինչը չի կարող լիարժեք ներկայացնել Արցախի պայմաններում տարածված միջատակերների կարգի ներկայացուցիչների տեսակային կազմը, կենսաբանական, մորֆոլոգիական, էկոլոգիական առանձնահատկությունները:

Արդի գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում, գյուղատնտեսության քիմիացման մակարդակի բարձրացման գործընթացում անհրաժեշտ է դաշնում էկոլոգիայի և կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ հարցերի մշտապես թարմացումը, ինչը հնարավորություն է տալիս այդ կենդանիների ռացիոնալ օգտագործման, վտանգված տեսակների և էկոհամակարգերի պահպաննան խնդիրների մշակման, վնասատու կենդանիների թվաքանակի կարգավորման գործընթացի, գյուղատնտեսական, հանաճարակարանական աշխատանքների լիարժեք իրականացումը:

Վերջին տարիների ընթացքում հանքարդյունաբերության զարգացման, անտառահատումների և նոր հողերի յուրացման հետ կապված Արցախի կաթնասունների ֆաունայի միջատակերների կարգի վերաբերյալ նախկինում կատարված ուսումնասիրությունները լուրջ լրացումների կարիք ունեն:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է Արցախի ֆաունայի միջատակերների կարգի բազմակողմանի ուսումնասիրությունը ներկա պայմաններում:

Աշխատանքի հիմնական խնդիրներն են.

1. Կատարել Արցախում տարածված միջատակերների կարգի տեսակային

կազմի վերլուծություն:

2. Կատարել ձևաբանական չափումներ և ստացված տվյալները համեմատել Հայաստանի և Կովկասի վերաբերյալ առկա տվյալների հետ:

3. Ուսումնասիրել Արցախի միջատակերների տարածվածության սահմանները և դրանց փոփոխությունները, բաշխվածությունն ու առատությունը ըստ ուղղահայաց և լանդշաֆտային գոտիների, կազմել տարածման քարտեզներ:

4. Ուսումնասիրել միջատակերների էկոլոգիայի և կենսաբանական առանձնահատկությունների մի շարք հարցեր (օրական և սեզոնային ակտիվությունը, թվաքանակի փոփոխությունները, ապրելավայրերը, սննդի կազմը և այլն):

5. Ուսումնասիրել և ներկայացնել միջատակերների որոշ տեսակների պոպուլյացիաների սեռահասակային կազմը, ֆիզիոլոգիական վիճակը և սերնդում սեռերի հարաբերակցությունը:

6. Ուսումնասիրել որոշ միջատակերների արյան կազմի փոփոխություններն ըստ սեզոնների և ուղղահայաց գոտիականության:

7. Մշակել միջատակերների հազվադեպ և արժեքավոր տեսակների պահպանության համար անհրաժեշտ համալիր միջոցառումներ և ներկայացնել համապատասխան բնապահպանական կառույցներին:

Աշխատանքի գիտական նորույթ:

1. Ենթալով Արցախում ստեղծված իրավիճակից և լայն թափ առաջ կենսամիջավայրային փոփոխություններից, կատարվել են միջատակերների կենսաէկոլոգիական ուսումնասիրություններ:

2. Գնահատվել է Արցախում տարածված միջատակերների ֆաունայի ներկա վիճակը, ցուցակագրվել ու հստակեցվել է նախկինում նշված տեսակների թիվը:

3. Քննարկվել են Արցախի միջատակերների բարձունքագոտիական տարածվածության սահմանները և դրանց փոփոխությունները, հայտնաբերվել ու քարտեզագրվել են նախկինում նշված նոր տարածքներ:

4. Ինչպես ամբողջ Հայկական լեռնաշխարհում, այնպես էլ Արցախում առաջին անգամ մեր կողմից կատարվել են միջատակերների կարգի որոշ ներկայացուցիչների հեմոդինամիկական (արյունաբանական) հետազոտություններ:

5. Կատարվել է ուսումնասիրվող կենդանիների քանակական հաշվարկ տարբեր տարիներին տարբեր վայրերում, պարզվել են եզ առանձնյակների ֆիզիոլոգիական վիճակն ու սերնդում սեռերի հարաբերակցությունը:

6. Առաջին անգամ Արցախում միջատակերների որոշ տեսակների համար պարզաբանվել են կերպարաժնի տեսակային կազմը և սեզոնայնությունը:

7. Միջատակերների որոշ տեսակների տարածվածության և թվաքանակի վերաբերյալ մեր հետազոտություններում ստացված տվյալների հիման վրա առաջարկություններ են արվել նախկինում Ղարաբաղի կենդանիների կարմիր գրքում (2012թ.) գրանցված միջատակերների 4 տեսակներից բացի ընդգրկելով 3 տեսակ՝ սպիտակափոր ողնի (*Erinaceus concolor*), կովկասյան գորշատամ (*Sorex caucasica*), արևելապարսկական սպիտակատամ (*Crocidura zarudnyi*), և ստեղծել հատուկ պահպանվող տարածքներ Պատարայում, Թարթառում և Արաքսի հովտում (Միջնավան, Վան, Մուշ, Դիգմայրի):

Աշխատանքի տեսական և գործնական արժեքը: Իրականացված ուսումնամիրությունների արդյունքում տարբեր բնակատեղերում առանձնացվել և ուսումնասիրվել են միջատակերների համակեցությունները, ինչզե, բնականաբար, կարևոր նշանակություն ունի Արցախի կարնասունների գույքագրման, բնական էկոհամակարգերում նարդածին տրանսֆորմացիայի գործընթացի ուսումնամիրման և կենսաբազմազանության պահպանման միջոցառումները մշակելու համար:

Դետագուտման արդյունքները կարելի է օգտագործել էկոլոգիական մոնիթրունգի կազմակերպման, ֆաունայի պահպանության, տնտեսական աշխատանքների կազմակերպման ժամանակ կենդանական աշխարհին հասցված վնասի չափի հաշվարկման ծրագրերի իրականացման գործընթացում: Ուսումնասիրությունների արդյունքները կարող են օգտագործվել նաև թերիոլոգիայի, կենդանաբանության, կենդանաաշխարհագրության, կենդանիների էկոլոգիայի բուհական մասնագիտական դասընթացներում, ինչպես նաև բնապահպանության հարցերով գրադլող կազմակերպությունների, գյուղատնտեսության ոլորտի մասնագետների կողմից:

Աշխատանքի փորձահավասարիությունը: Ասենախոսության արդյունքները գեկուցվել են ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի սեմինարներում, քիմիա-կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդում (2007-2016), ներկայացվել են միջազգային գիտապրակտիկ գիտաժողովներին (Advances in the biology of shrews III, September 14-17, 2010, Syktyvkar, Komi Republik, Russia, Moscow, 2010; Современные проблемы биологии и экологии. Материалы докладов II международной научно-практической конференции, 4-5 марта, 2016, г. Махачкала):

Յրապարակումները: Դետագուտությունների արդյունքները արտացոլված են 12 գիտական հրապարակումներում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ասենախոսությունը կազմված է ներածությունից, 5 գլուխներից, եզրակացություններից: Աշխատանքը պարունակում է 5 քարտեզ, 41 աղյուսակ, 26 գծանկար, 16 լուսանկար: Ասենախոսությունը շարադրված է համակարգչային շարվածքով և կազմված է 145 էջից: Օգտագործված գրականության ցանկը ներառում է 144 անվանում: Ասենախոսությանը կցվում է 17 էջից բաղկացած 3ավելված:

ԱՇԽԱՏԱԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ I. ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄԱՆԱՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԼԱՍՊԱՖԱՏԱ- ՖԱՌԻՆԻՍՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Այս գլխում քննարկվում են Արցախի հանրապետության բնակլիմայական պայմանները, ջրագրական ցանցը, հողերի տիպերը, բուսական աշխարհը, լանդշաֆտագոտիւական բազմազնությունը ու տեղադրությունը, գոտիների մակերեսները, հնչքեն նաև ներկայացվում են միջատակերների վերաբերյալ առկա գրական տվյալները:

ԳԼՈՒԽ II. ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հետազոտություններն իրականացվել են Արցախի բոլոր շրջաններում 2007-2016 թթ. ընթացքում: Հետազոտությունների համար որպես ստացիոնար ընտրվել են Իվանյանի, Շերքածորի, ճարտարի տարածքները, Կարկառ, Թարթառ, Խաչեն գետերի հովիտները (հավելված՝ քարտեզ 1):

Աշխատանքի ընթացքում ուսումնասիրվել է Արցախում տարածված միջատակերներին պատկանող 4311 առանձնյակ: Մորֆոմետրիկ չափումները կատարվել են 859 առանձնյակի վրա, 3376-ը ենք են ծագեր, 76 առանձնյակի մոտ ուսումնասիրվել է ֆիզիոլոգիական վիճակը (առանց ձևաբանական չափումների): Այստեղ ընդգրկված է նաև կենդանիների այն թվաքանակը, որոնք արտաքին տվյալների ուսումնասիրությունից հետո ազատ են արձակվել՝ տվյալ տառածքում եկոլոգիական դինամիկ հավասարակշռությունը պահպանելու համար: Նշվող թվի մեջ են մտնում նաև Արցախի դպրոցների, Արցախի պետական համալսարանի քանգարանային նմուշները, անհատական հավաքածուները, հնչքեն նաև պատահաների գործ դարձած կենդանիները:

Կատարվել են կենդանիների ձևաբանական և գանգարանական չափումներ: Որոշ առանձնյակներ հերձվել են՝ բազմացման առանձնահատկությունները հետազոտելու համար ըստ ընդունված մեթոդների (Տուտկովա Հ.Բ., 1949; Խովիկով Գ.Ա., 1953), իսկ նրանցից վերցրած արյունը ենթարկվել է լարորատոր հետազոտության (թվով 123 առանձնյակ) և հեմոդիմամիկական ցուցանիշների ուսումնասիրության (հեմոգլոբինի, էրիթրոցիտների, լեյկոցիտների պահունակության, լեյկոցիտար բանաձևի որոշում), սրտի զարկերը որոշվել է դասական մեթոդով՝ ըստ Կորուսկովի (Մինասյան Ս.Ս. և Շակորյան Ն.Ս. և ուրիշներ, 2003):

Միջատակերների որսի ձևերը պայմանավորված են թաքստոցների տիպով, ընակավայրերի դիրքով, եղանակային պայմաններով և այլն: Համակեցություններում միջատակերների հարաբերական հաշվարկը իրականացվել է թակարդ/օր մեթոդով, երրուղիներով, հեկտարներով (Շայրապետյան Վ.Տ., 2006ա; Կարասեա Ե.Բ., Տելիցիա Ա.Յ., 1998): Կենդանիների հաշվարկը կատարվել է թերիալոգիայում ընդունված հետևյալ բանաձևով՝ $J = C / (A \times T) \times 100\%$, որտեղ C -ն՝ Թօրում որսված առանձնյակների թիվը է, A -ն՝ թակարդների ընդիանուր թիվը, T -ն՝ որսի օրերի թիվը (Կարասեա Ե.Բ., Տելիցիա Ա.Յ., 1998 թ.): Որս-

Ված յուրաքանչյուր տեսակի հաշվարկի միջին սխալը (Mi) որոշվել է հետևյալ

$$բանաձևով \ Mi = \sqrt{\frac{N - Wi}{N}}, \text{ որտեղ } N - \text{ կենդանիների ընդհանուր թիվն է, Wi - ին տվյալ և տեսակի կենդանիների թիվը (Դմիտրիև Ա.Ի., 2001 թ.):$$

Կարնասունների համակեցությունների նմանության ինդեքսը որոշվել է $S=2C/(A+B)$ բանաձևով (Մեգարքան Է., 1992), որտեղ A -ն՝ Ա փորձում տեսակների թիվն է, B -ն՝ B փորձում տեսակների թիվը, C -ն՝ երկու փորձում ընդհանուր տեսակների թիվը: Համապատասխանաբար համեմատվող խմբերի ոչ նմանության ինդեքսը այդ դեպքում կլինի <<1-S>>:

Ուսումնասիրվող կենդանիների միջին տարիքը որոշվել է հետևյալ բանաձևով՝ $t_{1n_1} + t_{2n_2} + t_{3n_3}/S_n$ (Մեգարքան Է., 1992), որտեղ t -ն տարիքային դասն է, n -ը՝ յուրաքանչյուր տարիքային դասում կենդանիների քանակը, S_n -ը՝ խմբեցում կենդանիների քանակը: Կենդանիների տարիքը որոշվել է հաշվի առնելով ատամների մաշվածությունը, թաթերի ու պոչի մազակալվածությունը (Դոլցօվ Բ.Ա., 1985):

Կենդանիների նշադրումը կատարել ենք չվացվող ներկերով, ականջների վրա թթվակի կտրվածքով, առջևի վերջույթների մատների կամ պոչի հատումով:

Զեաբանական և գանգաբանական չափումներն իրականացվել են կենդանաբանության մեջ կիրառվող դասական մեթոդներով (Կոզյակին Ա.Պ., 1944; 1965; Յավլույան Է.Գ., Յայրապետյան Վ.Տ., 2003ա), իսկ չափումների վիճակագրական մշակումները՝ կենսաչափական մեթոդներով: Ստացված արդյունքների հավաստիության որոշման համար օգտագործվել են Ստյուդենտի չափամիջները (Խակին Գ.Փ., 1990): Միջատակերների այն տեսակները, որոնց տեսակային պատկանելությունը կասկածներ է առաջարել, ուղարկվել են Լեհաստանի նեյրոֆիզիոլոգիայի ինստիտուտի գենետիկայի լաբորատորիա (Վարչական կ.գ.դ. պրոֆեսոր Կ. Տուրլեյսկուն: Կարգաբանությունը ներկայացնում ենք ըստ Պավլինովի և Ռոսսոլիմո Օ.Լ., 1987; Պավլինով Ի.Յ., 2003):

Միջատակերների սնունդ հանդիսացող միջատների և նրանց թրուրների կազմը որոշել ենք միջատաբանական որոշչների օգնությամբ՝ մինչև կարգ (Արնոլ্ডի Լ.Վ, Եցազու Յ.Բ. և այլ, 1964; Նեցրուսու Ե.Ա., Նեցրուսու Օ.Պ., Նեցրուսու Ս.Օ., 2008; յարագալ Արյունական առաջնորդությունը, 2007):

Զեաբանական չափամիջներն աշխատանքում ներկայացված են հետևյալ հապավումներով՝ ՄԵ - մարմնի երկարությունը, ՊԵ - պոչի երկարությունը, ԳԸԵ - գլխի ընդհանուր երկարությունը, ԳԿԵ - գանգի կոնդիլորազալ երկարությունը, ԱԵ - ականջների երկարությունը, ԱԼ - ականջների լայնությունը, ՍԼ - միջաքային լայնությունը, ԱՎԸԵ - ատամների վերին շարքի երկարությունը, ՂԹԵ - հետին թաթի երկարությունը, ԹԵ - քրոսկրի երկարությունը, Ռու.Ե - ռոստրումի լայնությունը, ԳՄԼ - գլխի միջաքային լայնությունը, ո - կենդանիների քանակը, m_{in} - սողոյի փոքրագույնը (մինիմումը), M_{ax} - սողոյի առավելագույնը (մաքսիմումը), M - միջին թվաքանա-


կանը, տ - միջին թվաբանականի միջին սխալը, d - միջին քառակուսային շեղունը, Cv - վարիացիայի գործակիցը:

Ուսումնասիրությունների ընթացքում որսված կենդանիների ապրելավայրերի աշխարհագրական ցուցանիշները կամ ծովի մակերևույթից բարձրությունները ստույգ որոշելու համար օգտագործվել է Magellan GPS-315 էլեկտրոնավիճացիոն սարքավորումը: Նյութի վիճակագրական վերլուծությունը իրականացվել է Hewlett-Packard (hp) համակարգչի Microsoft Office Word և Excel 2010 ծրագրերով:

ԳԼՈՒԽ III. ԱՐՑԱԽԻ ՂԱՍՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՏԱԿԵՐՆԵՐԻ ՍՈՐՖՈԿԵՆՍԱՐԱՎԱԿԱՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Այս գլխում ներկայացված է միջատակերների առանձին տեսակների (թվով 13) տարածվածությունը, էկոլոգիան, կենսաբանությանը նվիրված հարցերը, տարբեր տարիների դիտարկումներով միջատակերների առանձին տեսակների քանակը, դրա փոփոխությունները:

Կովկասյան խլուրդի (*Talpa caucasica*) տարածվածության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս տեսակը չի հանդիպում միայն հարթավայրային գոտում: Նախալեռնային գոտու ուսումնասիրված միջատակեր կենդանիների ընդհանուր թվաքանակից կովկասյան խլուրդի առանձնյակների քանակը կազմել է 2,8% (13 առանձնյակ), միջին լեռնային գոտում՝ 4,6% (15 առանձնյակ), բարձր լեռնային գոտում՝ 3,6% (6 առանձնյակ): Գծանկար 1:



Գծանկար 1. Տարբեր գոտիներում հայտնաբերված կովկասյան խլուրդի (*Talpa caucasica*) քանակը (%-ով)

Երկարապոյ սպիտակատանների թվաքանակը ենթարկվել է փոփոխությունների տարբեր վայրերում տարբեր տարիների (գծանկար 2):



Գծանկար 2. Երկարապոչ սպիտակատամի (*Crocidura goldenstaedti*)
քանակը տարբեր տարիներին տարբեր վայրերում

2011թ-ից արձանագրվել է այս կենդանիների թվաքանակի աճ, որը պայմանվորված է նշված տարածքում մեղմ մեծոռով, մշակվող տարածքներում թունաքիմիկատների չօգտագործմամբ և օրգանական պարարտանյութերով պարարտացմամբ (գոնադը): Կատարված դիտարկումների արդյունքում պարզվել է, որ երկարապահ սպիտակատամի (*C. guldentstadti*) թվաքանակի վրա բացասական ազդեցություն են թողոնում նաև կլիմայական պայմանները՝ մանավանդ խստացումն անհնարինակ է:

Մարտակերտի շրջանում հարթավայրային և նախալեռնային գոտիների 3 կենսամիջավայրերում որսված 110 մանր կաթնասուններից 76-ը եղել էն միջատակերներ, որից 43-ը (56,6%)՝ Ուղղեկի գորշատամներ: Ուսումնասիրությունների արդյունքում նշակվել են 245 բակարդ/օր և որսացվել է 201 մանր կաթնասուն, որից 83 առանձյակ (41,3%) կազմել են Ուղղեկի գորշատամները: Միջին և բարձր լեռնային գոտու կենսամիջավայրերում ուսումնասիրված 91 մանր կաթնասուններից 72-ը միջատակերներ էին, որից 40-ը (55,5%)՝ Ուղղեկի գորշատամներ: Քննարկվող գոտիներում ֆառունայի նմանության գործակիցը կազմել է 84,3% (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Տարբեր գոտիներում հաշվարկած Ռադդեի (*Sorex raddei*)
գորշատամի քանակը

Կենսաբանական դր	Հարթավայրային և ճախատության գոտիների տարբեր կենսամիջավայրերում էապես շեղումներ չեն ռիտվում, մինչդեռ միջին և բարձր լեռնային գոտիներում առկա են շոշափելի շեղումներ (աղյուսակ 2):						Միջին և բարձր լեռնային գոտիներում միջավայրերի ընդունակությունը			
	Բակարգություն	Ընդունակություն	Ծնանակների միջավայր	Ուսուցիչ գորշատամի	Ծնանակների միջավայր	Ընդունակություն	Միջին գորշատամի	Ընդունակություն	Ուսուցիչ գորշատամի	Ծնանակների ընդունակությունը
Կենսամիջավայրեր I	30	25	17	9	68	26	17	13	6	76,5
Կենսամիջավայրեր II	63	57	37	20	65	60	54	46	25	85,2
Կենսամիջավայրեր III	37	28	22	14	78,6	29	20	13	9	65

Աղյուսակ 2

Որսված Ռադդեի գորշատամի (*Sorex raddei*) հաշվարկի միջին (Mi) սիսալը

Կենսաբանական դր	Հարթավայրային և ճախատության գոտիների որոշ տեսակների պուլիսացիաների սեռահասակային կազմը, ֆիզիոլոգիական վիճակը, սերնդում սեռերի հարաբերակցությունն ու դրա փոփոխությունները՝ ըստ տարիների ու վայրերի:				Միջին և բարձր լեռնային գոտիներում միջավայրերի պուլիսացիաների սեռահասակային կազմը, ֆիզիոլոգիական վիճակը, սերնդում սեռերի հարաբերակցությունն ու դրա փոփոխությունները՝ ըստ տարիների ու վայրերի:			
	Բակարգություն	Ընդունակություն	Ծնանակների միջավայր	Ուսուցիչ գորշատամի	Բակարգություն	Ընդունակություն	Ծնանակների միջավայր	Ուսուցիչ գորշատամի
Կենսամիջավայրեր I	30	25	17	0,685	26	17	13	0,774
Կենսամիջավայրեր II	63	57	37	0,678	60	54	46	0,676
Կենսամիջավայրեր III	37	28	22	0,603	29	20	13	0,555

Աշխատանքում ներկայացված է միջատակերների որոշ տեսակների պուլիսացիաների սեռահասակային կազմը, ֆիզիոլոգիական վիճակը, սերնդում սեռերի հարաբերակցությունն ու դրա փոփոխությունները՝ ըստ տարիների ու վայրերի:

Փոքրիկ գորշատամի սերնդում սեռերի հարաբերակցությունը փոփոխվել է

Ժամանակի ընթացքում, սակայն ճնշող մեծամասնությամբ գերակշռել են էգերը: Իվանյանում ուսումնասիրված 426 ձագերից 206-ը (8,4%) եղել են արուներ, իսկ 220-ը (51,6%)՝ էգեր: Այստեղ ձագերի սեռերի հարաբերակցությունը կազմել է՝ 1:1,07, Ուղտասարում՝ 1:1,04, Վարազարնում՝ 1:1,02: Ասկերանի շրջանի նշված վայրերում ուսումնասիրված 1166 ձագերից 569-ը (48,8%) արունե էին, 597 (51,2%)՝ էգեր. ընդհանուր առմանը սեռերի հարաբերակցությունը կազմել է 1:1,01 (աղյուսակ 3):

Աղյուսակ 3
**Տարբեր վայրերում և ժամանակներում փոքրիկ գորշատամի
(Sorex minutus) սերնդում սեռերի հարաբերակցությունը**

Նայտմաբերման վայրը	Ուսումնասիրման ժամկետները	Քանակը n	Սեռը, քանակը և տոկոսը			
			:	%	%	
Իվանյան	02.04.2008	18	8	44,4	10	55,6
	17.04.2008	28	14	50	14	50
	23.05.2008	48	23	47,9	25	52,1
	16.06.2008	56	27	48,2	29	51,8
	10.09.2008	20	10	50	10	50
	15.10.2008	15	8	53,3	7	46,7
	20.04.2010	80	38	47,5	42	52,5
	25.05.2012	64	31	48,4	33	51,6
	18.09.2012	49	25	51	24	49
	23.10.2012	48	22	45,8	26	54,2
Ուղտասար	15.03.2008	56	28	50	28	50
	30.04.2008	84	41	48,8	43	51,2
	20.10.2008	60	30	50	30	50
	25.01.2011	18	8	44,4	10	55,6
	09.02.2011	21	11	52,4	10	47,6
	29.03.2011	63	30	47,6	33	52,4
	27.05.2011	112	56	50	56	50
	08.04.2014	77	36	46,7	41	53,3
Վարազարուն	07.05.2008	56	29	51,8	27	48,2
	22.06.2010	49	24	49	25	51
	18.10.2012	30	15	50	15	50
	27.04.2013	10	4	40	6	60
	26.06.2014	104	51	49	53	51
Ընդամենը		1166	569	48,8	597	51,2

Տարբեր տարիների դիտարկումներով պարզվել է, որ բազմացնանը մասնակցում են ոչ բոլոր էգերը (այսուսակ 4): Այսպես, Իվանյանի տարածքում ուսումնասիրված 68 էգ առանձնյակներից 27,9%-ը եղել են իդի, 58,9%-ը՝ կերակոռող, 13,2%-ը՝ ստերօ, Ուղտասարում համապատասխանաբար՝ 31%, 57,5%, 11,5%, Վարազարնում՝ 34,8%, 58,7%, 6,5%: Ասկերանի շրջանում ուսումնասիրված էգերի 11%-ը կազմել են ստերօները, իսկ 89%-ը՝ իդի և կերակոռող էգերը:

Այսուսակ 4

Փոքրիկ գորշատամի (*Sorex minutus*) էգ առանձնյակների ֆիզիոլոգիական վիճակի տվյալները

Ուսումնասիրման վայրը	Ժամկետը	Կենդանիների քանակը	Կենդանիների ֆիզիոլոգիական վիճակը		
			Իդի	Կերակոռող	Ստերօ
Իվանյան	02.04.2008	9	4	3	2
	17.04.2008	13	6	4	3
	23.05.2008	9	-	8	1
	20.04.2012	15	5	10	-
	18.09.2012	12	3	7	2
	23.10.2012	10	1	8	1
Ուղտասար	15.03.2008	18	9	7	2
	20.10.2008	17	4	12	1
	25.01.2011	9	2	3	4
	09.02.2011	10	5	3	2
	27.05.2011	17	3	14	-
	08.04.2014	16	4	11	1
Վարազարուն	22.06.2011	9	2	7	-
	18.10.2012	12	4	6	2
	27.04.2013	9	8	1	-
	26.06.2014	16	2	13	1
Ընդամենը		201	62	117	22

Համեմատվել են Արցախի (մեր կողմից ստացված), Արևելյան Նախակովկասի և Յայսատանի միջատակերների մորֆոնմետրիկ չափումները: Համեմատությունից ակնհայտ երևում է, որ Արցախում տարածված ականջեղ ոզնին մարմնի և ականջների երկարությամբ գերազանցում է, իսկ պոչի երկարությամբ համարյա հավասար է մյուսներին: Յետին թաթի երկարությամբ գերակշռում են Յայսատանում տարածված ոզնիները, մինչդեռ զանգի կողմիլութագալ երկարությամբ և կենդանի քաշով գերազանցում են Արևելյան Նախակովկասում տարածվածները (այսուսակ 5):

Աղյուսակ 5
Տարբեր վայրերում ականջեղ ոգնու (*H. auritus*) մարմնի չափումները

Չափում-մերժ մաս	Արցախ, Ա. Գրիգորյան			Արևոլով, Տեմբռոսով, 1983			Ղայաստան, Ավագյան 20010		
	Վայրապետյան (n= 20)			Արևոլյան Նախակով վկաս (n=24)			(n= 24)		
	min	max	M	min	max	M	min	max	M
ՄԵ	140	290	236	124	220	176	126	196	170
ՊԵ	16	30	23,5	16	28	23,5	14	31	24
ՂԹԵ	23	35	29,5	27	32	30,5	23	38	31
ՊԾԵ	37	45	41,5	-	-	-	39,4	44,9	42
ՊԿԵ (n=7)	34	43	40	41,7	46,5	44	38,1	44,1	41
ԱԼ	10	12	11,25	10,1	11,6	11	10,2	11,8	11
ԱԵ	29	37	34	24	37,8	33	27	36,9	32,5
ԱԼԸԵ	20	24	22,5	20,8	22,4	21,5	20,5	23,3	22
ԱԸԸԵ	31	33	29,5	31,8	33,9	32,5	30	33,4	32
ԹԱՀՈ (գ)	140	390	290	208	455	318	144,1	390	294,5

ԳԼՈՒԽ IV. ՄԻՋԱՏԱԿԵՐՆԵՐԻ ՂԱՍԵՍԱՏԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՋԵՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

IV.1. Միջատակերների բարձունքա-գոտիական բաշխվածությունը

Լեռնային շրջաններում կենդանիների բնակեցման խտությունը և տեսակային կազմը պայմանավորված է ուղղահայաց գոտիականությամբ: Այսպես՝ ծովի մակերևույթից մինչև 500մ բարձրություններում (հարթավայրեր) գրանցվել է 8 տեսակ (61,5%), 500-1000մ (նախալեռներ)՝ 13 կամ 100%, 1000-2000մ (միջին բարձրության լեռներ)՝ 11 (84,6%), 2000 և ավելի մետր (բարձրադիր լեռներ)՝ 8(61,5%): Միջատակերների տեսակային մեջ բազմազանությամբ հագեցած է նախալեռնային գոտին, երկրորդ տեղը գրադեցնում է միջին լեռնային գոտին, համենատարար աղքատ են հարթավայրային և բարձր լեռնային գոտիները (աղյուսակ 6):

Դայտնաբերվել են միջատակերների տարբեր տեսակների համար մինչև այժմ չնշված (Վ. Վայրապետյան, 2014) բնակատեղեր՝ Մամարք, Մուշ, Աղարել, Միջնավան, Նարեշտար, Լիսագոր, Մեղվածոր, Խրամորթ, Եղցատեղ, Ննգի, Տումի, Տոնաշեն, Կարողիկեսար, ճաղատասարի լանջ և այլն: Արցախի միջատակերների բոլոր 13 տեսակների համար կազմվել են նոր տվյալներով լրամշակված տարածման քարտեզներ:

Աղյուսակ 6
Տարբեր բարձրունքային գոտիներում ուսումնասիրած
միջատակերների քանակը

	Տեսակներ	հարթա-վայրային	նախալեռնային	միջին լեռնային	բարձր լեռնային
1	Սպիտակափող ոզնի - <i>Erinaceus concolor</i>	35	57	21	-
2	Ալպան ջեղ ոզնի - <i>Hemiechinus auritus</i>	8	12	7	-
3	Կովկասյան խոլոդ - <i>Talpa caucasica</i>	-	13	15	6
4	Փոքր կամ կրվոյ խոլոդ - <i>Talpa levantis</i>	17	32	29	8
5	Կովկասյան որդ շատում - <i>Sorex caucasicus</i>	-	17	33	19
6	Ռադդեի գորշատամ - <i>Sorex raddei</i>	26	42	35	13
7	Փոքր գորշատամ - <i>Sorex minotauris</i>	46	75	30	28
8	Ծելկովնիկով վիլ կրտսորս - <i>Neomys schelkowickovi</i>	-	14	-	-
9	Պատիկ սպիտակատամ - <i>Suncus etruscus</i>	19	14	-	-
10	Երկար ապչ սպիտակատամ - <i>Crocidura goldenstaedti</i>	-	46	62	33
11	Փոքր սպիտակատամ - <i>Crocidura sua veolens</i>	38	55	43	32
12	Սպիտակափող սպիտակատամ - <i>Crocidura leucodon</i>	40	54	32	25
13	Արևելապարսկական սպիտակ առամ - <i>Crocidura zarudnyi</i>	-	18	20	-
	Ընդամենը տեսակներ	8-61,5	13-100	11-84,6	8-61,5
	Ընդամենը հայտնաբերված առանձինություններ	229-19,6	449-38,4	327-28	164-14

IV.2. Թաքսոնոցները: Օրական ակտիվությունը

Նկարագրություն են միջատակերների թաքսոնոցների տիպերը, ակտիվության օրական, սեզոնային և տարեկան փուլերը, ռիթմերի փոփոխությունները և պատճառները: Ինչպես բնության, այնպէս էլ անազատության մեջ կատարված ուսումնասիրություններով և դիտարկումներով պարզվել է, որ սպիտակափող ոզնիների ինչպես օրական, այնպես էլ սեզոնային ակտիվությունը սերտորեն կապված է արտաքին շերմաստիճանային պայմաններից: Դրանք ունեն նընշաղային և գիշերային ակտիվություն, օրվա լուսավոր ժամերն անցկացնում են ոչ խոր քնի ու թույլ փարարված վիճակում:

Իվանյան գյուղում (տնամերձ այգում) իրականացված 24-ժամյա դիտարկումներով առանձնացրել ենք սպիտակափող ոզնիների ակտիվության հետևյալ հիմնական տիպերը. 1) տարածքի ուսումնասիրություն, 2) սննդի հայրածություն, 3) փշերի օծություն, 4) քուն, 5) ագրեսիվ վարք, 6) բնի կառուցություն: Նոր տարածքներ յուրացնելուն կենդանին ծախսում է 10 ժամ 48 րոպե կամ օրվա 45%, սննդի հայրայրնան համար՝ 6 ժամ (օրվա 25%-ը), թաքսոնոցների ընտրություն և հանգստի համար՝ 7 ժամ 12 րոպե (օրվա 30%-ը):

Բնության մեջ կատարված դիտարկումները ցույց են տվել, որ գետնափորները օժնված են օրական ակտիվության բազմակիությաին ռիթմով, սակայն առավել գործուն են առավոտյան և իրիկնային նթնշաղին: Չնայած որոշ հեղինակներ (Իվաներ Թ.Բ., 1975; Յայցե Մ.Բ., Յոյտա Լ.Լ., Շեֆտել Բ.Ի., 2014) նշում են, որ գարնան և աշնան անձրևոտ, ամպամած եղանակներին

դրանց գիշերային ակտիվությունը կորչում է, սակայն մեր հետազոտությունների ընթացքում կենդանիները բազմիցս թակարդներ են ընկել հենց այդ եղանակներն:

IV.3. Միջատակերների կերի կազմը և սեզոնայնությունը

Դամաձայն դիտարկումների, կերաբաժնի հիմնական մասը կազմում են որպի ժամանակաշրացքում գերակշռող և հասանելի միջատները: Այսպիս՝ միջատակերները, վարելով մթնշաղագիշերային կենսակերպ, հենց օրվա այդ ժամերին են սկսում սնվել առավել ակտիվ: Երթուղային դիտարկումներով և կատարված հերձումներով պարզվել է, որ փոքր խվարդագիշերային գիշատիչ է և ամենակեր, սակայն կերաբաժնի կազմը փոփոխվում է՝ կախված սեզոնից (Աղյուսակ 7):

Աղյուսակ 7
**Փոքր խվարդագիշերային կերաբաժնի փոփոխությունը
ըստ սեզոնների**

Կենդանատեսակը	գարում n=2	ամառ n=3	աշում n=3	ձմեռ n=2
բգեզ	10%	11%	8%	-
թրուրներ	5%	15%	3%	-
անձրևորդեր	80%	60%	79%	88%
հողմածոտանիներ	5%	14%	10%	12%

IV.4. Արցախի միջատակերների հեմոդինամիկական ցուցանիշների վերլուծությունը

Աշխատանքում քննարկվել են Արցախում տարածված միջատակերների որոշ ներկայացուցիչների հեմոդինամիկական ցուցանիշների կախվածությունն ուղղահայաց գոտիկականությունից և սեզոններից:

Կատարվել է լեյկոցիտների և լեյկոցիտար բանաձևի ուսումնասիրություն: Լեյկոցիտների բարձր ցուցանիշներ արձանագրվել են արտաքին ու ներքին մակարույժներով վարակված միջատակերների մոտ: Ուսումնասիրված 106 առանձնյակներից գետնափորների 28-ի մոտ գրանցվել են լեյկոցիտների բարձր ցուցանիշներ, 39-ի մոտ՝ միջին ցուցանիշներ: Սպիտակափոր ոզնիներից նշված 8 առանձնյակները, իսկ գետնափորներից 28-ը (տարբեր տեսակներ) եղել են առավել շատ վարակված արտաքին ու ներքին մակարույժներով (աղյուսակ 8): Խվարդագիշերից հետո առանձնյակները չեն հայտնաբեր-

վել, 7 առանձնյակների մոտ հայտնաբերվել են 5-6 կլոր և տափակ որդեր, 2 առանձնյակի մոտ՝ նաև տղեր: Խլուրդների լեյկոցիտների՝ ոզնիների համանուն ցուցանիշի հետ համեմատությունից պարզ երևում է, որ այն մի քանի անգամ զիջում է ոզնիների ցուցանիշներին, ինչը բույլ է տալիս ենթադրել, որ խլուրդները քիչ են եղել վարակված արտաքին և ներքին մակարույժներով:

Աղյուսակ 8

Արտաքին ու ներքին մակարույժներով վարակված միջատակերների կարգի որոշ տեսակների լեյկոցիտների (հազար) փոփոխությունները

Տեսակ	n	Լեյկոցիտների քանակը ($10^3/\mu\text{l}$)								
